ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1.Հայաստանի Հանրապետության ~~2018 թվականի հունվարի 1-ի~~2016 թվականի հոկտեմբերի 04-ի հարկային օրենսգրքի (~~ՀՕ-165-Ն,~~ այսուհետ՝ Օրենսգիրք) 380-րդ հոդվածի 1-ի մասը ~~խմբագրել հետեւյալ կերպ.~~«օբյեկտների,» բառից հետո լրացնել «շրջիկ առևտրի կետերի,» բառերով:

~~«Կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի եւ նոտարների կողմից կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում (ներառյալ՝ կանխավճարները, մասնակի վճարումները) հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է առեւտրի օբյեկտների, առեւտրի կետերի (այդ թվում՝ շարժական առեւտրի կետերից եւ տրանսպորտային միջոցներից ապրանքների վաճառքի դեպքում), առեւտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս, առցանց վաճառքի իրականացնելիս, բնակչության համար աշխատանքներ կատարելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս (այդ թվում՝ առաքման եւ այլ ծառայություններ, որոնք իրականացվում են ապրանքներ ձեռքբերողի, աշխատանքներ ընդունողի կամ ծառայություններ ստացողի կողմից նշված վայրում), բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի:~~

~~***Հոդված 2.***~~ ~~Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 380 հոդվածի 2-րդ կետը:~~

Հոդված 2~~3~~. Օրենսգրքի 381-րդ հոդվածի՝ ~~2-րդ մասը «վճարումը:» բառից հետո, լրացնել հետեւյալ բովանդակությամբ՝~~

~~«Առցանց կամ շրջիկ վաճառք իրականացնելու եւ շրջիկ ծառայություններ մատուցելու պարագայում Կառավարության սահմանած կարգով հարկային մարմնում կազմակերպության անունով գրանցված եւ Կառավարության սահմանած՝ հսկիչ դրամարկղային մեքենային ներկայացվող տեխնիկական պահանջները բավարարող հսկիչ դրամարկղային մեքենան կարող է կիրառվել ապրանքներ ձեռքբերողի, աշխատանքներ ընդունողի կամ ծառայություններ ստացողի կողմից նշված վայրում:»:~~

1) 2-րդմասում«օբյեկտի,»բառիցհետո լրացնել «շրջիկ առևտրի կետի,» բառերով,

2) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով՝

«Շրջիկ առևտրի կետերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնող կամ բնակչությանը ծառայություններ մատուցող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի (բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնի) վրա սույն հոդվածի 3-րդ մասի 8-րդ և 9-րդ կետով նախատեսված՝ ապրանքի անվանման և ապրանքային դիրքի, ծառայության անվանման և կոդի, գնվող ապրանքի քանակի, դրա չափման միավորի տպագրումը պարտադիր է՝ անկախ Կառավարության սահմանած կարգից ու ժամկետներից:»,

3) 3-րդ մասի 3-րդ կետը «հասցեն» բառից հետո լրացնել «, իսկ շրջիկ առևտրի կետերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելու դեպքում՝ կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) գտնվելու (հաշվառման) վայրի հասցեն, ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի) մակնիշը և հաշվառման համարանիշը» բառերը:

Հոդված 3.Օրենսգրքի 384-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին կետը «վայրում» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետում» բառերով, իսկ «վայրի հասցեով» բառերից հետո՝ «կամ շրջիկ առևտրի կետի համար» բառերով,

2) 4-րդ մասի 2-րդ կետը «հասցեն» բառից հետո լրացնել «,իսկ շրջիկ առևտրի կետերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելու դեպքում՝ շրջիկ առտրի կետ հանդիսացող ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի) մակնիշը և հաշվառման համարանիշը» բառերով,

3) 7-րդ մասը «վայրի տարածքի» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետի» բառերով, իսկ «տարածք» բառերից հետո՝ «կամ շրջիկ առևտրի կետ» բառերով,

4) 8-րդ մասը «տեսանելի մասում» բառերից հետո լրացնել «շրջիկ առևտրի կետերի դեպքում՝ ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի) վրա» բառերով:

Հոդված 4.Օրենսգրքի 416-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «պահին և վայրում» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետում» բառերով, իսկ «վայրի հասցեով» բառերից հետո՝ «կամ շրջիկ առևտրի կետի համար» բառերով,

2) 2-րդ մասի 1-ին կետը «այդ վայրում» բառերից հետո լրացնել «իսկ շրջիկ առևտրի կետերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելու դեպքում՝ շրջիկ առևտրի կետում» բառերով, իսկ «վայրի հասցեով» բառերից հետո՝ «կամ շրջիկ առևտրի կետի համար» բառերով,

3) 4-րդ մասի 1-ին կետը, 5-րդ մասի 1-ին կետը և 8-րդ մասը «առևտրի օբյեկտում» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետում» բառերով,

4) 9-րդ մասը «առևտրի օբյեկտներում» բառերից հետո լրացնել «կամ շրջիկ առևտրի կետերում» բառերով,

5) 10-րդ մասը «տեսանելի տեղում» բառերից հետո լրացնել «, շրջիկ առևտրի կետերի դեպքում՝ ավտոմոբիլի և (կամ) դրա կցորդի (կիսակցորդի) վրա» բառերով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երրորդ ամսվա 1-ից: